

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԱՏԵՆԱՇԱՐ ԳՈՒՐԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ
ԹԻՒ 4

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԿԱԶՄԱԿԵՐՊԵԱԼ ԱՀԱԲԵԿԶՈՒԹԻՒՆ



281.64
7-997

1934
Նիւ Եոբֆ

281.62
7-997

4 NOV 2000


ՄԱՏԵՆԱՇԱՐ ԴՈՒՐԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ
ԹԻԻ 4

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԿԱԶՄԱԿԵՐՊԵԱԼ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ

Մատենաշար Դուրեան Յանձնախումբի յաջորդական
քիւերը մամլոյ տակ են:



1934
Նիւ Եոթ

ՈՃԻՐԷՆ ԱՌԱՋ ԵՒ ՅԵՏՈՅ

Դուրեան Սրբազանի սպանութիւնը անդամ մը եւս պարզեց Դաշնակցութեան դիմապիղուծիւնը իր բովանդակ իսկութեանը մէջ: Մահափորձերէ առաջ՝ այդ Կուսակցութիւնը եղած է խիզախ, յանդուգն ու վայրագ փոյթ իսկ ըրած չէ երևոյթները փրկելու եւ իր մտադրութիւնը ծածկելու:

Իսկ ոճրի գործադրութենէ վերջ, խուսափելու համար ստտիկանական հետապնդումէն, եղած է նկուն եւ անպատկառ ուրացող: Յետոյ, գործադրուած մահափորձերը եղած են միշտ թիկունքէն եւ վատարար միամիտ ու անձանօթ շարքայիններու ձեռքով:

Սփիւռքի մէջ Դաշնակցութիւնը դեռ չէ փորձած պատասխանատուութիւն հրաւիրող արարք մը կամ ոճիր մը գործադրել ուղղակի եւ անուն ու դիրք ունեցող կուսակցականի մը ձեռքով:

Յիմարներ չեն դաշնակ չէֆերը իրենց մորթը խանձելու համար կեանքը թանկարժէք է, երբ մանաւանդ պատրաստ ունին մոլորեալ ընկերներու հլու բանակը, որ իր կեանքի գնով յօթար է ստրկօրէն գործադրելու ՄԵՄԵՐՈՒ ոճրային որոշումները:


Ջամալեան դեռ վերջերս «հերոսներ» կ'անուանէր Դուրեան Սրբազանի սպաննիչները, բայց ինք կամ իրեն պէս Դաշնակցութիւնը իրը «արհեստ» շահագործողները դեռ չի փորձեցին այդ «հերոսներէն» մին ըլլալ:

Բայց մինչև երբ կրնա՞յ տեսել այս կրաւորական համակերպութիւնը: Դաշնակցական վարիչները չեն սոսկար որ օր մը եւ մօտ է այդ օրը, իր պարզամիտ շարքերն ալ պիտի սթափին, եւ ձերբազատուած պատրանքներու եւ խարկանքներու կապանքներէն, հաշիւ պիտի պահանջեն իրենց հայրենասիրութիւնը անխղճօրէն շահագործող այդ պարոններէն:

Դուրեան Սրբազան անմեղ զոհ մըն էր, իր սպաննիչներն ալ այլապէս արգահատելի զոհեր են:

Մենք համոզուած ենք որ այս պրակները օդտակարութենէ զուրկ չեն, հայ կեանքի իրականութիւնները յստակ ու մեկին պարզելու համար: Պատրանքներէ ազատուած, ազգային դերագոյն շահերու խոր գիտակցութիւնը եւ համոզումն է որ պիտի կրնայ ստեղծել մնայուն խաղաղութիւնը Սփիւռքի մէջ:

ԱՐՔ. ՂԵՒՈՆԴ ԴՈՒՐԵԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲ



58192-67

ԿԱԶՄԵԿԵՐՊԵԱԼ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆ



ՅԵՏԱԴԱՐՉ ԱԿՆԱՐԿ ՄԸ

Իր բովանդակ ահաւորութեանը մէջ, կարենալ յստակ ըմբռնելու համար Դուրեան Սրբազանի վայրագ սպանութիւնը եւ վերջին տարիներու մէջ սփիւռքի հայութեան ենթարկուած դժոխային վիճակը, հարկ է յետադարձ ակնարկ մը նետել վերջի ժամանակաշրջանի մէջ գահավիժող դէպքերու վրայ:

Գաղութներու ներքին խաղաղութիւնը փոթորկող ընդդիմամարտ բոլոր պայքարներու միակ առանցքը Խորհրդային Հայաստանն է, եւ անոր հանդէպ հայ ժողովուրդի աճեցուն համակրութիւնը: Դաշնակցութեան կողմէ յաճախակի յեղեղուած եռագոյն դրօշ, ազատ, անկախ եւ միացեալ Հայաստան գեղեցիկ բառերը լոկ պատրուակներ են իրականութիւնը սքօղելու համար:

Դաշնակցական վարիչ շրջանակները չի կրցան համակերպիլ որ, քաղաքական դէպքերու նոր դասաւորումով եւ Կարսի անկումով, Հայ Հանրապետութեան վարչաձեւը վերջ գտնէ եւ իրենք միանգամ ընդմիշտ կրօնցեն իրենց դրաւած դիրքը եւ կարեւորութիւնը:

Այս ծանր ճախողանքը՝ որքան արդիւնք էր դաշնակցական կառավարութեան անհեռատես եւ արկածախնդրական գործունէութեան, նրախքան ալ հետեւանքն էր այդ օրերու մէջ տեղի ունեցած համաշխարհային քաղաքականութեան հիմնական փոփոխութեան: Հայ Հանրապետութեան ճակատագիրը վարողներ-

ըր, Հայաստանի Թաթարները անօրացնելու դերազնի յաղթանակներէ զինովցած, չկրցան տեսնել թէ Հիւսիսի Հսկան՝ Ժամանակաւոր քայքայումէ վերջ, յաջողած էր Խորհրդային վարչաձեւի տակ իր ուժերը ամփոփել եւ հետզհետէ անքակտելի ամուր օղակով մը իրեն միացնել իրմէ հեռացած ազգաբնակչութիւնները եւ հողամասերը:

Բազմամիլիոն Ուքրանիան արդէն մաս կը կազմէր Խորհրդային Միութեան. Անդրկովկասի Հանրապետութիւններէն՝ Թաթարները եւ Վրացիք կանխահոգ միջոցներ ձեռք առած էին, եւ որոշ հակումներ ցոյց կուտային այդ Միութեան յարելու:

Միակ Հայ Հանրապետութեան դաշնակցական վարիչներն էին որ՝ քաղաքական հասունութենէ զուրկ, չի կրցան յստակ տեսնել իրականութիւնը եւ ըստ այնմ ծալք ստանալ:

Ոչ միայն անոնք չի գիտցան նպաստաւորուիլ Խորհրդային Միութեան քաղաքական կրկէսի վրայ վերըստին երեւումէն եւ իր ստացած տիրական դերքէն, այլ և անոր հանդէպ ցոյց տուին երկդիմի եւ խաբէական քաղաքականութիւն մը եւ յայտնի թշնամանք:

1920 Մայիսին Ադեքսանտրաբօլի մէջ կազմակերպուած պօլշեվիկ առաջին շարժումը դաշնակցական կառավարութեան կողմէ կը զսպուէր հրով ու սուրով: Օրուան հերոսը՝ Զօր. Սեպուհ, այդ առթիւ կը խօսէր հրաբորբոք ճառ մը — «Աշխարհի բոլոր պօլշեվիկները եթէ միանան չեն կրնար Հայաստան մտնել առանց իմ դիակիս վրայէն անցնելու»: Եւ այդ սնափառ ու մեծխօսիկ զօրավարն էր որ, յետոյ, պօլշեվիկներու դաւլէն առաջ խուճապային փախուստով մը կը հեռանար Հայաստանէն՝ չի մոռնալով իր խումբին հետ տանիլ նաեւ Հայաստանի պետական դանձը:

Խորհրդային Միութեան դէմ նոյն ամբարտաւան եւ արհամարտ վերաբերումը ցոյց տրուեցաւ նաեւ հայկական բարլամենտի մէջ:

Դաշնակցութիւնը դիտակցելով հանդերձ թէ Թաթարները Պօլշեվիկ դարձած են եւ թէ Խորհրդային Ռուսիոյ եւ Թուրքիոյ մէջ գաղտնի համաձայնութիւն կնքուած է, եւ թէ ինք շրջապատուած է թշնամի հարեւաններէ, անբեւեակայելի յանդգնութիւնը ունեցաւ 1920 ին Օլթիի ածխահանքերը դրուելու համար պատերազմի առիթ ստեղծել Թուրքիոյ դէմ:

1920 Օգոստոս 2-ին գումարուած հայկական խորհրդարանի մէջ դաշնակցական երեսփոխանները նիզակ կը ձօճէին ոչ միայն Թուրքիոյ, այլև Ռուսիոյ դէմ: Մարդ չի կրնար երեւակայել թէ այդ ճգնաժամային օրերու մէջ, կառավարական ներկայացուցիչ մը, որ պիտի էր Պր. Ն. Ադրալեան, որքան ողջմտութենէ եւ բանականութենէ զուրկ ըլլալու էր, որ ինքզինքին ներէր Հայաստանի մեծ դրացիին հասցէին ըսելու հետեւեալ նախատալից խօսքերը. — «Այս անգամ կոխ է Ռուսներին դէմ հորհրդային դիմակի տակ, որն աւելի դաժան է, քան հին կարգերը, նեմգամիտ է եւ բթամիտ ու ոչինչ չի կարողանում ըմբռնել: Հնի նման սա էլ իր գերեզմանն է փորում: Նա չի հասկնում, թէ ի՞նչ է ինքը միջագային չափով: Նա չի կարողանում ըմբռնել, որ յաղթում է նա, որ գարգացած է մտաւորապէս եւ տնտեսապէս:

«Խորհրդային Ռուսաստանը, այդ ցնցոտին, մըրտնով, հոգիով եւ էութեամբ ազատ այդ երկիրը ցանկանում է անցնիլ Հնդկաստան՝ օժանդակ ունենալով Մուսթաֆա Բեմալի ողորմելի զօրքերը: Հոտաուրիւնը կորցրած այդ երկիրը գալիս է սպառնալու մեզ եւ մեմք պարտաւորած ցոյց կը տանք մեր կերպարանքը, յարգել կը տանք մեր ժողովրդի իրաւունքները թէեւ նա այժմ չի յարգում այդ եւ ցանկութիւն էլ ունի այն խորտակելու:

«Նեմգամիտ եւ դաժան խորհրդային Ռուսաստանը, Թուրքերու հետ միացած եւ զինակցած, այդ ան-

կերպարան մարմինը յետադէմ է հին Ռուսաստանի նրման . . . :

«Մենք ամենածանր պայմանների մէջ ցոյց տուինք Թուրքիին եւ Թաքարին, որ այս հողը Հայաստան է եւ որ Հայ Ժողովուրդը ցանկանում է ազատ լինել : Այժմ մենք նոյնը ցոյց կը տանք նաեւ Ռուսին :» («Հայաստանի Հանրապետութիւն», Ս. Վրացեան, էջ 497)

Պորհրդարանի դադը միջնորդութիւն մէջ արձագանգած այս ամբարտաւան խօսքերէն վերջ, հաղիւ ամիս մը անցած, Թուրքիոյ դէմ մեր յայտարարած Կարսի պատերազմը ամօթալի դասալքութեամբ, առանց թընդանօթ մը արձակելու, չարաչար պարտութեամբ կը կորսնցնէինք, եւ իբր բնական հետեւանք այս մեծ աղէտին, վերջ կը գտնէր Հայ Հանրապետութեան վարչաձեւը :

Դաշնակցական կառավարութեան անկումէն եւ դաշնակցականներու հեռացումէն վերջ միայն Հայաստան կը գտնէր իր պատմական որոշ ուղեգիծը եւ կը դառնար Պորհրդային Միութեան բաղկացուցիչ մէկ մասը, կ'ապահովէր իր Ֆիզիքական եւ ազգային գոյութիւնը, իր սահմանները կ'ընծայէր անբռնաբարելի եւ փիւնիկի մը վերանորոգ կենսունակութեամբ կը նուերուէր իր հսկայական վերելքին :

Բայց Դաշնակցութիւնը՝ որ ազգային դերագոյն չահերէ աւելի կը մտահոգուի կուսակցական հաշիւներով, իր կորսնցուցած դիրքը Հայաստանի մէջ վերագրաւելու համար, չի խղճահարեցաւ մեր դարաւոր թշնամուտն՝ Թուրքին գինուորական օշնութեան ապաւինած՝ փորձել փետրուարեան պետական հարուածը :

Դաշնակցութեան ապարդիւն վերջին ճիգն էր ան, համոզուած՝ թէ Հայաստանի կազմակերպուած ուժին դէմ այլեւս «անելիք չունի», իր պետական շքախումբով, նախարար, սպարապետ, գորավար, աւագանիք, փոխադրուեցան հայ գաղթաշխարհը, եւ իր մենատի-

րութիւնը հոն ապահովելու համար, վերսկսաւ նոր թափով մը իր յեղափոխական գործունէութեան՝ եկեղեցոյ եւ ազգային հաստատութեանց շուրջ :

Եւ այդ օրէն կ'սկսի սփիւռքի հայութեան ենթարկըւած դժոխսային վիճակը :

Բայց Դաշնակցութիւնը շատ լաւ դիտէր թէ Հայ Հանրապետութեան անկման մէջ գաղութահայութիւնը ոչ մէկ դեր ունեցած է . ընդհակառակը ան իշխանական առատաձեռնութեամբ մասնակցած է Հայ Հանրապետութեան ի նպաստ բացուած բոլոր հանգանակութեանց, առանց դաշնակցական վարիչներէ հաշիւ պահանջելու, նպատակի գործածութեանէն վրիպած, իր տուած միլիոնաւոր տոլարներուն :

Դաշնակցութիւնը խորապէս դիտէր թէ հայրենի երկրին քաղաքական ճակատագրի եւ վարչաձեւի կազմութեան մէջ հայ ժողովուրդի յայտնած ցանկութիւնն ու փափաքը ոչինչ կ'արժեն . պատահաբերու գերագոր ուժը եւ մեծ պետութեանց շահերու դասաւորումը միայն կը տնօրինէ ամէն բան :

Յիսուն տարուան յեղափոխական գործունէութեամբ եւ անհաշուելի կորուստներով չի յաջողեցանք «Հիւանդ Թուրքիա»-յէն թիղ մը հող ազատագրել եւ ոչ ալ երոպական դաշնագիրներով նուիրագործուած Բարենորոգմանց ծրագիրները գործադրել տալ : Այս անհերքելի իրականութիւն է :

1918-ի Հայ Հանրապետութեան կազմութիւնը արդիւնք էր ընդհանուր պատերազմի միջոցին Ռուսական կառավարութեան պարտութեան եւ Գերման եւ Թուրք բանակներու ժամանակաւոր յաղթութեան : Այս վերջիններու ստիպման եւ պարտադրութեան տակ էր որ յայտարարուեցաւ Անդրկովկասի ազգաբնակչութեանց հանրապետութիւնները՝ ընդ որս հայոց Մայիս 28-ի անկախութիւնը :

Իսկ այսօրուան Պորհրդային Հայաստանի գոյու-

թիւնը պարզապէս ծնունդն է քաղաքական նոր պայ-
մաններու եւ Խորհրդային Միութեան հաճութեան:

Պատմական այս անհերքելի ստուգութեանց առաջ
ինչ կ'արժեն կուսակցութեան մը սնամէջ յոխորտան-
քը եւ նուիրական բառերու անվերջ հորովումը:

Դաշնակցութեան յաճախակի պարզած Ազատ, Ան-
կախ եւ Միացեալ Հայաստանի տեսիլքը պարզապէս
խարկանք եւ աժան ամբոխավարութիւն մըն է միայն,
արդի Խորհրդային Հայաստանի կարեւորութիւնը նը-
ւագեցնելու յայտնի ճիգով:

Այլապէս ինք շատ լաւ գիտէ թէ մեր թիւը, ցրիւ-
վիճակը եւ սեփական ուժերը քաղաքական արդի պայ-
մաններու մէջ ոչ մէկ հնարաւորութիւն կ'ընծայեն
բռնական ուժով վերստանալու մեր պատմական հայ-
րենիքը 160 միլիոն բնակչութեամբ հոգոր Խորհրդային
Միութենէն եւ ոչ ալ վերանորոգուած Թուրքիայէն:

Դաշնակցութիւնը իր սեփական փորձառութեամբ
համոզուած է որ արդի Հայաստանի վայելած չափա-
ւորեալ ազատութիւնը շատ աւելի կ'արժէ, քան Հայ
Հանրապետութեան շրջանին Պաթումի եւ Աղեքսան-
տրաբոլի՝ Թուրքիոյ հետ կնքած, ստրկական դաշնա-
գիրներով վայելած անուանական անկախութիւնը:

Այս պայմաններու մէջ բովանդակ Հայ ժողովուր-
դը՝ բացի Դաշնակցութենէ, չ'ուզեր այլեւս ցնորքներու
գերի ըլլալ, նորանոր աղետալի փորձարկութեանց
ենթարկուիլ, ինչ որ համարժէք պիտի ըլլար ազգային
անձնասպանութեան:

Սփիւռքի հայութեան այս հաստատ համոզումն է
որ հաճելի չի թուեցաւ Դաշնակցութեան եւ որ ինք-
զինքին ներքեց անոր դէմ վարուիլ այնպէս, ինչպէս ու-
եւէ ազգ պիտի վարուէր ներքին թշնամիներու եւ դա-
ւաճաններու հետ:

Եւ հեզնութիւնը հոն է որ Պրոմէթէներու հետ
հայրենիքի դէմ դաւադրող եւ Հայաստանը «Վայաս-

տան» նկատող Դաշնակցութիւնն է որ ահարեկչութիւն
ի դործ կը դնէ Հայաստանի նուիրուած հարազատ հա-
յերու դէմ:

Դուրեան Սրբազան իր նոր զոհերէն մին է:

ԿԱԶՄԱԿԵՐՊԵԱԼ ԱՀԱՒԵԿԶՈՒԹԻՒՆ

Դաշնակցութիւնը երբ չի յաջողեցաւ իր վարած
հակա-Հայաստանեան քաղաքականութիւնը ժողովըր-
դական դարձնել. եւ իր ծոցին մէջ խի ունեցաւ արդի
Հայաստանի համակիր «Մարտիոցական» «հերձուածը,
որդեզրեց ահարեկչական դրութիւնը, սարսափով իր
բռնատիրութիւնը պարտադրելու համար սփիւռքի հա-
յութեան, ենթարկելով դայն ստրկութեան:

Իր վերջի Պատգամաւորական ժողովին մէջ, ան-
ձերը ու տեղը անյայտ, Դեկավար Մարմինի մը կազ-
մութիւնը չարագուշակ նշան մըն էր պատահելիք ծանր
դէպքերուն:

Այդ թուականէն կ'իսի բովանդակ դաշնակցական
մամուլի սպառնալիքները եւ ոճրաբոյր հրատարակու-
թիւնները ներքին քշնամիներու դէմ, որոնք ազատ եր-
կիրներու մէջ կը խորհէին թէ կրնան անկախ կարծիք
ունենալ եւ չ'ենթարկուիլ Դաշնակցութեան կամայա-
կանութեանց:

Շիքակոյի դէպքէն շատ առաջ եղիպտոսի դաշնակ-
ցական պաշտօնաթերթը՝ «Յուսարե», լրբենի համար-
ձակութեամբ մարտահրաւէր կ'ուղղէր երեւակայական
ներքին թշնամիներու եւ կը մերկացնէր Դաշնակցու-
թեան նոր ընդգրկած ոճրապարտ ուղեգիծը, ահա թէ
ինչ կ'ըսէ այդ թերթը. — «Մեր յեղափոխական կեանքը
հարուստ է ՊԱՏԺԻԶ ԴՈՒՄԿՆԵՐՈՎ, եւ յամենայն
դէպս, հայ ժողովուրդը չ'է որ պիտի դժգոհի գոր-
ծունէութենէն:

«Վերադարձ դէպի ԱԶԴՈՒ ՄԻԶՈՅՆԵՐ՝ յանուն
խաղաղութեան եւ ապահովութեան:

«Անա միակ փրկութիւնը՝ մեզ համար, միակ միջոցը, չարիքին դէմ կռուելու համար :

«Յանցաւոր է ժողովուրդ մը որ իր մէջ կ'ապրեցնէ հրէշներ :

«Ու այդ նոյն ժողովուրդն է որ գէթ այսօր, պիտի ձերբազատուի անոցմէ : Ասիկա պիտի ըլլայ առանց տատանումի եւ երկընտրանքի : Յանուն ինքնապաշտպանութեան : Չափէն աւելի ներողամիտ եղանք ու այսօր, ատոր համար կը քաւենք մեր մեղքը : Այ չենք կըրնար : Նե՛րֆին ԹՇՆԱՄԻՆ յանդուգն, սանձարձակ է դարձած անսահմանօրէն : Ան պիտի ԴԱՍ ստանայ : Եւ ուրիշը մենք չունինք : Հայմաթլօզ ենք ու դատարանէ գուրկ :

«ՎԵՐԱԴԱՐՁ...» :

(Արտատպուած «ԱՐԵՒ»-ի 4572 ք. ին մէջ : ստորագծումը մեր կողմէ)

Նոյն ատելավառ ողին «Յուսարեք»-ի ուրիշ մէկ թիւին մէջ .—

«Իսկ հայանուն անգգամներու նկատմամբ, ասկէ վերջ մեր դիրքը պիտի ըլլայ «ԾՆՕՏ ԸՆԴ ԱՏԱՄԱՆ ԵՒ ԳՂՈՒՆ ԸՆԴ ԱԿԱՆ» : Մեզ հանելի եկաւ շքեղ Հելլադայի այս պատգամը :»

(Արտատպուած «ԱՊԱԳԱՅ»-ի 1934 Յունուար 27-ի քիւի մէջ)

Ոչ նուազ սպառնադին է նաեւ Բարիդի դաշնակցական «Յառաջ» թերթը : Առիւծի բաշեր ցցելու արհաւիրակց յայտարարութենէն վերջ, 1933 Նոյեմբեր 29 թիւին մէջ կը գրէր .—

«Այդ դիմակաւորները այնքան կորսնցուցած են իրենց խելքը ու խիղճը, որ ոչ մէկ վայրկեան իսկ չեն խորհիր քէ՛ լուրջ ինքնապաշտպանութեան կը մղեն Դաշնակցութիւնը :

«Անոնք որ չափը կ'անցնեն պէտք է խորհին հակադրեցութեան վրայ... :

«Սքափեցէք, հէյ սիրացուներ, դուք ձեր դիմացը պիտի գտնէք ԲՈՒՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ, իր երիտասարդ կեդր. Կովիթեով, որոնք գիտեն քէ ԻՆՁ Կ'ԸՆՆԵՆ ԵՒ ԻՆՁ Կ'ՈՒՋՆԵՆ :»

Դաշնակցութեան կողմէ տրուած այս համատարած մահապաշտպան իր աղէտաւոր արդիւնքը ունեցաւ : Սուրբոյ եւ Յունաստան մէջ անչունչ ինկան զոհերը, զաղտազոյլ կամ թիկունքէն զարնուած մահառիթ գընդակներով կամ դաշոյններով :

Եւ Կայէնի հարուածներու տակ անչնչացած այս անմեղ զոհերը հարազատ հայեր են, Հայաստանը հողեւին սիրած ըլլալուն համար, մահապատիժի դատապարտուած՝ Հայերու կողմէ :

Մահապատիւն ընդհանուր այս պայքարին մէջ, անչուշտ «Հայրենիք» օրաթերթը չէր կրնար անմասն մընալ :

Շիբակոյի դէպքէն վերջ ան աւելի խիղախ եւ անազորօյն եղաւ, հոս ալ, ներքին թշնամիներու դասը տարւո պատահութիւնը չուզեց կորսնցնել : Իր զարբնոցին մէջ պատարաստուած բողոքի արտայայտութիւնները եւ խմբագրականները՝ գրողի եւ թունաւոր, մէկ նպատակի կը ձգտէին, արժանաւոր դասը տալ ներքին թշնամիներուն, որոնց պարագլուխն էր Դուրեան Սըրբադան :

Նմոյշներ այդ հրատարակութիւններէն .—

«Պատակտումի սերմանիչ մըն է մեր Առաջնորդը, որ Շիբակոյի մէջ ցոյց տուաւ իր հոգիի ամբողջ տգեղութիւնը : Ամօք իրեն : Հայ ժողովուրդը եւս իր կարգին պէտք է արժանաւոր պատասխանը տայ անոր :» («Հայրենիք», քիւ 6445)

«Կը հասնի հատուցման օրը եւ հայ ժողովուրդը հաշիւի կը նստի այդ հայանուն դաւաճաններու հետ : Մեր դրօշակը անպատուողները չեն կրնար ներուիլ :» («Հայրենիք», քիւ 6474)

«Թուրքը սպաննել կ'ուզէ մեր ազատութիւնը եւ կ'անարգէ անոր խորհրդանիշ դրօշակը: Դուրեան Եպ. կը գործակցի քշնամիին զգուելի համարակալութեամբ մը: Մինչեւ Դուրեան անողոքաբար չպատժուի, մեր նահատակներու ոսկորները հանգիստ պիտի չմնան իրենց տեղը»: («Հայրենիք», քիւ 6448)

«Եթէ մեր գաղութը պատժէր անցեալ տարի Դուրեանը իր գործած յանցանքին համար, ան այս տարի այսօր անգգոյշ պիտի չըլլար: Ան այս անգամ պէտք է անպատիժ մնայ:»

«Լէգէտականներս կուսեցանք քշնամիին դէմ յանուն դրօշի: Որեւէ քրքատիպ հայ որ կը յանդգնի անարգել զայն, պէտք է անողոքօրէն պատժուի: Կը գարմանանք որ Դուրեան անպատիժ հեռացեր է Շիֆակոյէն:» («Հայրենիք», քիւ 6459)

«Ցաւ է խոստովանիլ որ մեր ազգային սրբութիւններուն հանդէպ անպատկառ վերաբերում ցոյց տուողներ կ'առաջնորդուին քշուառական Առաջնորդի մը կողմէ:»

«Անպատիժ մնալու վստահութիւնն է, որ կը մղէ այդպիսիները շարունակելու իրենց անորակելի արարքը: Այլ հերիք է: Թող այդպիսիները վայնան հայ ժողովուրդի արդար գայրոյթէն:» («Հայրենիք», քիւ 6439):

Անչափահաս պատանիներն իսկ լծուած էին դաշնակցական կարաւանին, եւ «Հայրենիք»ի էջերուն մէջ իրենց սրամտութիւնը արժեցնելու համար Առաջնորդը կը նմանցնէին խոզի կամ բօնիի:

Ծանօթ բժիշկ մ'ալ միտքի հաւասարութիւն պահելու համար այդ տղոց հետ, Տօն Քիչոթի հովեր առած, կ'սպառնար. — «Իր եօթանասունամեայ բազուկներով բզկտել Առաջնորդը»:

Դաշնակցական մամուլի գործած աւերները լրացնելու համար հրապարակային բացատրական ժողով-

ներ ալ կը զուժարուէին հայաշատ կարեւոր քաղաքներու մէջ, եւ օրուան բանախօսը՝ Մարդուկէսեան վարդապետ Առաջնորդի ԴԱՍԸ տալու սրտառուչ կոչերէ վերջ, կը համարձակէր եկեղեցւոյ Արքեպիսկոպոսի հասցէին ըսել. — «Էջը մէկ անգամ միայն իր չի գիտցած խոտը կ'ուտէ, մեր Առաջնորդը էշէն ալ ցած է եղեր որ նոյն սխալը նորէն կը գործէ:»

Խեղճ Առաջնորդին արժանի դասը տալու այս կոչերուն գործնական հետեւանք մը տալու համար, Պըրիճօրթէն դաշնակցական կին մը կը խոստանար 100 տողար տալ «անոր որ կը յաջողէր փափաքուած դասը տալու»: Եւ «Հայրենիք» իր էջերուն մէջ կը հրատարակէր այս նամակը:

Որոշ է որ այս գրգռիչ հրատարակութիւնները իրենց թունաւոր ներգործութիւնը ձգեցին դաշնակցական ղեւարխար շարքերուն վրայ:

Ուստըրի մէջ, Օգոստոս 13-ին, Դուրեան Սրբազան հրապարակային հանդէսի մը մէջ դաշնակցական տղերց կողմէ կ'ենթարկուէր վայրագ յարձակման:

«Պայքար» թերթը՝ խնայելու համար ազգային արժանապատուութեան եւ Դուրեան Սրբազանի ղեւարազածութեան, իբր անկարեւոր դէպք մը ներկայացուցած էր զայն:

«Հայրենիք», ընդհակառակը, մեծ դիրերով — «Ո՞վ կը Խեղճութիւնի ԴՈՒՐԵԱՆԻ ԿԵՐԱԾ ԾԵԾԸ», վերնագրով՝ իբր մեծ ՅԱՂԹԱՆԱԿ մը կը հաղորդէր զայն, եւ «Պայքար»ի կ'ուղղէր հետեւեալ սինիք դիտողութիւնը. —

«Ձանալ այժմ պգտիկցեմ զէպքը, կը նշանակէ դիտաւորեալ կերպով ՆՍԵՄԱՑՆԵԼ կամ ԱՐՀԱՄԱՐՀԵԼ այս դէպքին ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ու ՀՐԱՀԱՆԳԻԶ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ:» («Հայրենիք», քիւ 6472 — ստորագծումները մեր կողմէ):

Այլեւս բացայայտ էր որ կուսակցական թաղուն

հաշիւներով հրահրուած միամիտ շարքերու ատելութիւնը ի՛նչ աղիտաւոր վախճանի ծրագրուած էր հասցընել:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱՐԴԱՐ ԶԱՅՐՈՅԹ

Առաջնորդի դէմ մղուած անաղնիւ եւ բիրտ պայքարով Դաշնակցութիւնը ոչինչ չահեցաւ, ընդհակառակը ան ծառայեց Դուրեան Սրբազանի ժողովրդականութեան ծաւալման եւ գաղութահայութեան գլխաւորութեան զարթումին:

Կռիւլը այլեւս իր դիմագիծը կորսնցուցած էր, եւ եղած էր սուր պայքար ընդմէջ Դաշնակցութեան եւ հայ ժողովուրդի, առանց հատուածական խորականութեան:

Կուսակցութեան մը կողմէ Առաջնորդի դէմ անդացող լուտանքներու փոխարէն, ժողովրդային խոր գնահատութեան բազմաթիւ հեռագիրներ եւ նամակներ կը հասնէին Դուրեան Սրբազանին, պահանջելով որ աներկիւղ շարունակէ պահել իր պաշտօնը եւ հետեւած ուղեգիծը:

Նոյն իսկ արտասահմանեան ոչ-դաշնակցական մամուլը կը դրուատէր Դուրեան Սրբազանի շիտակ եւ անվեհեր կեցուածքը, իբր օրինակ ցոյց տալով դայն, դաշնակցական սարսափներէ սահմուկած անարի Առաջնորդներու:

Առաջին անգամն էր որ ժողովրդային հսկայ գանդուածներու կամքը՝ ձերբադատուած կուսակցութեան մը կաշկանդումէն, կուզար ինքզինքը պարտադրելու վերջ դնելով կամայականութեանց:

Այս Կամքը իր վճռական դերը ունեցաւ վիճակաւ դադարեալ երեսփոխաններու նոր ընտրութեան մէջ:

Դաշնակցութիւնը որոշած էր, Սեպտեմբերին դուրեաններէ Երեսփոխանական Ժողովի մէջ տապալել Առաջնորդը: Օրինական եւ ապօրինի միջոցներով ջանաց մեծամասնութիւն ապահովել, բայց չի յաջողեցաւ:

Նոր ընտրութեանց արդիւնքը եկաւ ստուարացնել արդէն իսկ մեծամասնութիւն կազմող Առաջնորդի համակիրներու թիւը:

Այս նոր պարտութիւնը աւելի եւս դայրացուց Դաշնակցութիւնը, որ դիմեց իր սիրելիադոյն ահաբեկչութեան հին մեթոտին:

Երեսփոխանական Ժողովի դուժարման օրը, չորս հոկերէ ժողովասրահը հաւաքուած էին մարտական դաշնակցական տղերք, եւ դերք դրաւած:

Առաջնորդի բարեկամ երեսփոխաններու խոհականութիւնն էր միայն որ փրկեց կացութիւնը եւ պատահութիւն չթողուց որ այդ ժողովը Դեկտ. 24-ի սպանութենէ աւելի ահաւոր պատկեր մը ներկայացնէ:

Ճշգրիտ պատկերացումը տայու համար Երեսփոխանական Ժողովի մէջ պատահած իրադարձութեանց, նոյնութեամբ կ'արտագրենք Ազդ. Կեդր. Վարչութեան բացատրական տեղեկագիրը:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ազգային Կեդր. Վարչութիւնն պարտ կը զգայ վերջին անգամ դուժարուած Երեսփոխանական Ժողովի շուրջ կատարուած իրադարձութեանց եւ ժողովի որոշմանց ամփոփումը հազորդիկ հասարակութեան:

Բարձրաշնորհ Տ. Ղեւոնդ Սրբազան Արքեպիսկոպոսի հրահրանք Ազգային Երեսփոխանական Ժողովը Սեպտ. 2-ին իր օրինական առաջին նիստը դուժարեց Նիւ Եորքի 27-րդ Եկեղեցւոյ ներքնասրահին մէջ:

Առաջնորդ Սրբազանի հիւանդութեան պատճառաւ իր կողմէ փոխանորդաբար նախագահելու հրահրուած էր Տ. Յովսէփ Եսս. Կարապետեան:

Նիստի բացման Կեդր. Վարչութեան դիւանը առժամաբար վարեց դիւանական գործողութիւնները եւ բուէից առաւելութեամբ ընտրուեցաւ Քննիչ Յանձնախումբ մը նորընտիր երեսփոխաններու ընտրական տեղեկագիրները քննելու եւ ընտրութեանց օրինաւորութիւնը հաստատելու համար:

Ունկնդիրներու անօրինակ բազմութիւն մը դրաւած էր սրահը:

Շիրակոյի ցուցահանդէսի մէջ եռագոյն դրօշը շուրջ պատահած միջազգային առթիւ, ամիսներէ ի վեր մղուած լրագրական թեր ու դէմ բուռն պայքարը երեսփոխանական ժողովի շուրջ յառաջ բերած էր բացարձակ հետաքրքրութիւն եւ որոշապէս տեսանելի էր այդ բաղմունքեան մէջ փոխադարձ ատելալաւ ոգացում:

Ժողովի դիւանական պարզ խնդրոյ շուրջ եղած վիճարանութեանց ընթացքին ունկնդիրներու կողմէ եղած անհարկի միջամտութիւններ, համալրանքի կամ դժգոհութեան արտայայտութիւնները, պէտք զգացուցին հաւանական անախորժ դէպքերու առաջը առնելու եւ երեսփոխաններու խօսելու ազատութիւնը ապահովելու համար, յաջորդ նիստը դումարել § րդ. Եկեղեցւոյ Տաճարին մէջ եւ դռնփակ:

Այս առաջարկը ժողովի երկու ընդդիմադիր կողմերու իսկ հասնութեամբ որոշուեցաւ ենթարկել նախագահի հաճութեան եւ Տ. Յովսէփի Եպիսկոպոս ի պաշտօնէ յայտարարեց՝ «Եկատելով ժողովի բացառիկ հանդամանքը կ'որոշեմ յաջորդ նիստը դումարել դռնփակ»:

Այս որոշումէն վերջ նիստը փակուեցաւ: Հախուռակ յաջորդ նիստը դռնփակ կատարելու բացորոշ պայմանին, երեսփոխանական ժողովի ծանօթ փոքրամասնութիւնը՝ միացած 27րդ. Եկեղեցւոյ Հողարարձութեան հետ, աննկատ թողուց այդ որոշումն ալ, եւ ոչ միայն մերժեց Եկեղեցւոյ Տաճարը արամադրել իրր ժողովատեղի, այլ եւ նախորդ նիստի սրահը թոյլատրեց որ դրաուի ժողովը պային անօրինակ բաղմունքեամբ, պարզապէս երեսփոխանական ժողովը կատարուած իրողութեան առջև դնելու համար:

Այս ակնյայտնի ապօրինութեան առջև երեսունէ աւելի երեսփոխաններ զբաւորապէս դիմեցին Առաջնորդ Սրբազանի, պահանջելով որ ժողովի դռնփակ դումարման որոշումը յարդուի, որպէս զի ժողովը՝ աղատ ճնշումներէ, կարենայ անարդել կատարել իր օրինական աշխատանքը: Ժողովատեղիի փոփոխութիւնն ալ անհրաժեշտ դարձած էր, խնդարելու երեսփոխաններու պահանջն էր նիստը շարունակել Հօթէլ Մարդինիքի ընդարձակ սրահին մէջ: Առաջնորդ Սրբազանը համամիտ դռնփակելով եղած բանաւոր առաջարկին, իր մօտ հրաւիրեց իր կողմէ նախագահ կարգուած Յովսէփ Սրբազանը եւ ի պաշտօնէ յանձնարարեց 27րդ. Եկեղեցին դռնփակ երեսփոխաններու հաղորդել թէ ժողովը պիտի դումարուի Հօթէլ Մարդինիքի մէջ, ուր պարտին ներկայ դռնփակ բոլոր երեսփոխաններն ալ:

Տ. Յովսէփ Սրբազան իրեն եղած յանձնարարութիւնը աններելի զանցառութեամբ մը չ'է հաղորդած ներկայ երեսփոխաններու:

րուն, եւ նոյնպէս տակ բացումը կատարել է հոն հաւաքուած երեսփոխաններու ապօրինի նիստին:

Տ. Յովսէփ Սրբազան Առաջնորդի ուղղեալ իր չքմեղադրի մէջ այդ մեղանշումը կը վերադրէ «կացութեան լրջութեան»: Բայց բացայայտ է որ 27րդ. Եկեղեցին դռնփակ երեսփոխանները դիտակ էին ժողովատեղիի փոփոխման: Ազդային վարչութեան անդամ ընդդիմադիր երեսփոխան մը հեռախօսով հաղորդակցութեան մէջ էր Մարդինիքի Հօթէլ դումարուած ժողովի Ատենապետ Պր. Մաղաք Պէրպէրեանի հետ: Ինք գիտէր թէ ժողովի բացումը յայտարարած էր պարզապէս իրենց զալուստ սպասելով: Բայց ակնարկեալ ընդդիմադիր երեսփոխանը հոն դռնփակ երեսփոխաններու կողմէ վճռապէս յայտարարեց թէ իրենք որոշած են ժողով դումարել միայն 27րդ. Եկեղեցւոյ սրահին մէջ եւ դռնբաց:

Այս պատասխանը ստանալէ վերջ էր որ Առաջնորդ Սրբազանի հաւանութեամբ Մարդինիքի Հօթէլի մէջ դումարուած երեսփոխանական ժողովի նիստը բացուեցաւ ժամը 7:30-ին ի ներկայութեան 57 երեսփոխաններու:


Առաջնորդ Սրբազանի յանձնարարութեամբ Տ. Մամբրէ Ծ. Վրդ. Գալֆանեան նախագահեց նիստին: Մայր Դիւանի անդամ ընտրուեցան Տիար Մաղաք Պէրպէրեան՝ Ա. Ատենապետ, Տիար Լեւոն Պապեան՝ Բ. Ատենապետ, Տիար Պետրոս Պանտաջի՝ Ա. Ատենադպիր եւ Տիար Սիսակ Նալպետեան՝ Բ. Ատենադպիր:

Ատենապետը յայտարարեց թէ 27րդ. Եկեղեցի հաւաքուած երեսփոխանները այս ժողովին մասնակցելու համար իր ըրած ջանքերը ապարդիւն դարձան: Բանի որ հոն հաւաքուած երեսփոխանները օրինական մեծամասնութիւն կը կազմեն, կարելի է ընթացք տալ ժողովի աշխատութեանց:

Երեսփոխանական ժողովի նախագահ Տ. Մամբրէ Ծ. Վրդ. Գալֆանեան կարգաց Առաջնորդ Սրբազանի տեղեկագիրը: Ժողովը իր ջերմ գնահատութիւնը յայտնեց ծափերով եւ շնորհակալութեան ջուշներով:

Կարգացուեցաւ Կեդր. Վարչութեան Տեղեկագիրը ստորագրուած վեց անդամներու կողմէ: Ժողովը ապա տեղեկանալով որ վարչական նիստերը ստացել են կուսակցական ընդոյթ եւ անցել են ապրդիւն, եւ նկատելով որ արդէն իսկ կազմալուծուած է Վարչութիւնը ոմանց հեռացմամբ եւ ոմանց հրաժարմամբ, որոշեց օրակարգի անցնել Վարչութեան ամբողջական ընտրութիւնը:

Ժողովը անդրադառնալով Շիրակոյի Համագործակցութեան ցուցահանդէսի մէջ եռագոյն դրօշը շուրջ պատահած միջազգային, նկատեց որ զուտ հայկական արուեստ եւ մշակոյթ ցուցադրելու համար կազմուած հանդէսի մը մէջ մէկ քանի կուսակցականներ դրօշի



իննդիր յարուցանելով քաղաքական ընդթ ընծայած են եւ տոխթ տուած վարկարեկելու ցեղը, նկատելով նաեւ որ նոյն ցուցահանդէսին մէջ Գերմանիոյ նման ազգի մը ներկայացուցչները նմանօրինակ վէճի առթիւ բուականացած են միայն Ամերիկեան դրօշով ներկայանալ, ինչ որ ամենէն իմաստուն կրթազարութիւնն էր, համաձայն գտնուեցաւ Առաջնորդ Արքայանի խոհական ուղղութեան եւ յայտնեց իր վստահութիւնը:

Ժողովը տասը վայրկեան դադարէ վերջ ընտրեց Կեդր. վարչութիւնը հետեւեալ անձերէ.— Տ. Մամբրէ Ծ. Վրդ. Գալֆաեան, Տ. Մատթէոս Ա. Բհնյ. Հէքիմեան, Տ. Եղիշէ Բհնյ. Գալչընճեան, Տ. Արսէն Բհնյ. Թորոսեան, Տ. Յարութիւն Ա. Բհնյ. Թումանեան (փոխ անդամ), Տիար Լեւոն Պապեան, Տիար Մկրտիչ Նաճարեան, Տիար Տիգրան Սմարեան, Տիար Պետրոս Վաղարայեան, Տիար Վարդան Տիրատ, Տիար Յարութիւն Սարգիսեան (փոխ անդամ), Տիար Նշան Էթոհարեան (փոխ անդամ):

Ժողովը փակուեցաւ կէս գիշերին: Ազգ. Կեդր. վարչութիւնս երեսփոխանական Ժողովի ճշգրիտ ամփոփումը ապէ վերջ, պարտ կը զգայ յայտարարել թէ այս յուզումնալից շրջանի մէջ ստանձնած է վարչական ծանր պատասխանատու դործ մը պարզապէս Հայաստանեայց Եկեղեցւոյ կարգ ու սարքի պահպանման եւ անպատակ ստեղծուած ներքին ցաւալի պայքարի ընթացքին արգելելու համար զազութեան կեանքի եւ գործունէութեան բոլորովին կազմալուծումը:

Ողջամիտ Հայ հասարակութեան բաւորովին բացորոշ ըլլալու համար վերջին օրերու իրարու հակասող իրադարձութիւնները, ստիպուած ենք յայտնելու որ փոքրամասնութեան 27րդ Եկեղեցւոյ մէջ Սեպտ. 3, Կիրակի օրուան գումարած ժողովը զուրկ է օրինականութենէ եւ Առաջնորդ Արքայանը պաշտօնանկ ընելու որոշումն ալ բացարձակ հակասահմանադրական եւ բոլորովին ապօրինի է:

Ամերիկահայ Սահմանադրութեան 24րդ Յօդուածով «Թեմակալ Առաջնորդը կ'ընտրուի երեսփոխանական ժողովէն չորս տարուան պայմանաժամով եւ կը հաստատուի Ամեհայն Հայոց կաթողիկոսի կողմէ»:

Իսկ 21րդ Յօդուածի Բ. Համարով, «Երեսփոխանական ժողովը կ'ընտրէ եւ կը հրաժարեցնէ Առաջնորդը Ամեհայն Հայոց Հայրապետի հաստատութեամբ»:

Նոյնպէս Ժ. Համարով՝ «Առաջնորդի դէմ եղած բողոքները ի հարկին իր եզրակացութեամբ կը ներկայացուին Ամեհայն Հայոց Հայրապետին»:

Ազգային Սահմանադրութեան մէջ երեսփոխանական Ժողովը

ոչ մէկ իրաւասութիւն ունի պայմանեալ ժամանակէն առաջ առանց վեճ. Հայրապետի հաճութեան եւ որոշման Առաջնորդ մը հրաժարեցնելու:

Վեճ. Հայրապետը հեռազրով իր օրհնութիւնները եւ վստահութիւնը յայտնած է Առաջնորդ Արքայանի եւ երեսփոխանական Ժողովի, իր բարձր գնահատութիւնը յայտնելով Առաջնորդի եւ Ժողովականներու կողմէ ցոյց տրուած վերաբերումին համար:

Ազգ. Կեդր. վարչութիւնս, ի շահ Հայաստանեայց Եկեղեցւոյ կողմ կ'ուղղէ Գեր. եւ Արթ. Հովիւներու եւ Պատ. Հոգաբարձութեանց եւ բարեպաշտ ժողովրդեան, պատկառ կալ օրինաց եւ վեհապառ Հայրապետի հրամանաց եւ ըստ առաջնոյն շարունակել յարգալից յարաբերութիւն Առաջնորդի եւ Առաջնորդարանի հետ:

Հայ ժողովուրդը շատ անգամներ տեսած է նպատակաւոր կերպով յարուցուած ներքին վրդովումներ, բայց կրցած է հաստատ եւ անյողողը կամքով ծառանալ Եկեղեցին հատուածական հաշիւներու ծառայեցնող խմբակներու դէմ:

Ազգ. Կեդր. վարչութիւնս վստահ ժողովրդային համակրութեան եւ գործակցութեան կը ստանձնէ այս յուզումնալից շրջանին մէջ իրեն վստահուած ծանր եւ պատասխանատու պաշտօնը:

Ի դիմաց Ազգային Կեդրոնական վարչութեան
Ատեմաղպիր Ատեմապետ
ՎԱՐԴԱՆ ՏԻՐԱՏ ՄԱՄԲՐԷ Ծ. ՎՐԴ. ԳԱԼՖԱԵԱՆ

Սեպտեմբեր 20, 1933

Նիւ Եորք

Վարչական այս տեղեկագիրը յատկօրէն կը պարզէր որ՝ Գահակցութիւնը անյոյս՝ երեսփոխաններու օրինական մեծամասնութեան քուէով Առաջնորդի տապալման իր ծրագիրը յաջողցնելու, դիմած էր ահաբեկչական դրութեան: Ունկնդիրի անուան տակ՝ ժողովասրահը լեցուցած էր մարտական շարքերու հոծ բազմութեամբ, արհաւիրքի եւ սարսափի տակ, իր կամքը պարտադրելու երեսփոխաններու:

Նիստը՝ ազատ արտաքին ազդեցութենէ, դռնփակ գումարելու այնքան օրինական եւ բանաւոր որոշումը արհամարհած էր դահակցութիւնը, միեւնոյն ատեն մերժած էր Առաջնորդի հրաւերը՝ մասնակցելու Մարգինիկ Հօթէլի մէջ գումարուած օրինական ժողովին:

Մահուան սպանողիքի տակ, հարկադրած էին Յովսէփ Եպիսկոպոսի Կարապետեանը^(*), առանց ժողովատեղիի փոփոխութեան մասին իր ստացած հրահանգը հաղորդելու, նախագահել Չրդ Եկեղեցիի ապօրինի Երեսփոխանական ժողովին: Եւ հոն, Գաշնակցութիւնը, յանուն Ամերիկահայ գաղութի, ամբաստանութեանց տարափի տակ պաշտօնանկ հռչակած էր Առաջնորդը:

Ազգային տարեգրութեան աննախընթաց այս երկու ժողովներն ալ իրենց տեղեկագիրները ղրկեցին Վեհ. Հայրապետին, սպասելով Անոր հեղինակաւոր վճռին:

Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը, Վեհ. Հայրապետի նախագահութեամբ, յետ քննութեան տուած էր իր որոշումը:

Գաղափար մը տալու համար թէ էջմիածին որքան անկողմնակալ եւ առարկայական քննութեամբ մօտեցած էր հարցին, նոյնութեամբ կը ներկայացնենք իր այդ պատմական որոշմնագիրը:

Էջմիածնի Որոշումը Առաջնորդին Գործերու Եւ Կարգերու

ՊԱՏՃԷՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ

ԿԵ. Նիստի — 25 Հոկտեմբերի 1933 թ.

Լ Ս Ե Ց Ի Ն.—

1.— Ամերիկայի Հայոց Առաջնորդ Գեր. Տ. Ղեւոնդ Արքեպիսկոպոսի տարւոյ Օգոստոսի 28-ի եւ Սեպտեմբերի 22-ի դրութիւնները Չրդայի Արուեստահանդիսում եռագոյն դրօշակի պարզման առթիւ տեղի ունեցած պարագաների մասին:

2.— Նորա բացատրականը Յուլիսի 1-ի դէպքի մասին եւ այդ առթիւ Ազգային Կեդրոնական Վարչութեան թերթերում հրատարակած պաշտօնական յայտարարութիւնը ի հանդարտութիւն ժողովրդեան:

(*) Այս պարագան իր բոլոր մանրամասնութեամբ արդէն իսկ Յովսէփ Եպիսկոպոս գրաւորապէս յայտնած է Ընդհ. Դատախազութեան՝ Գուրեան Սրբազանի սպանութեան վերջ:

3.— Ազգային Կեդրոնական Վարչութեան Նախագահ Տ. Յովսէփ Եպիսկոպոսի տարւոյ Օգոստոսի 22-ի դրութիւնը Չրդայի Արուեստահանդիսում եռագոյն դրօշակի պարզման մասին:

4.— Չրդայի Արուեստահանդիսի Գործադիր Յանձնախմբի բացատրականը (Կոչնակ, Թ. 21, 12 Օգոստոս, 1933 թ.) իր բուն նաժընթացքի եւ առաջնորդող սկզբունքների մասին, եւ՝

5.— Թերթերի նկարագրութիւններն ու լուսարանութիւնները Չրդայի Արուեստահանդիսի միջոցակի մասին:

Ա.— Վերոյիշեալներից պարզուած է.—

ա.— Որ եռագոյն դրօշակի ցուցադրման խնդիրը նախապէս քննուել է Գործադիր Յանձնախմբի ժողովներում, դաշնակցական անդամի ներկայութեամբ, որ համակերպուելով մեծամասնութեան հետ՝ շարունակել է գործակցել եւ դրօշակի ցուցադրման գաղափարը վերջնականապէս մերժուել է հետեւեալ հիմունքներով.—

1.— Եռագոյնը ներկայ Հայ Պետութեան դրօշակը չի լինելով գուրկ է իրաւական հանգամանքից:

2.— Յանձնախումբը որոշել է Հայկական Օրում հանդէսը կատարել առանց դրօշակի, ոչ քէ որովհետեւ Յանձնախումբը նուազ յարգանք ունի եռագոյնի հանդէպ, քան նորա փառաբանողները, այլ որպէս զի խափանէ տրամագծօրէն հակակարծիք տարրերի հաւանական բաղխումն ու եղբայրասպան պայքարի կրկնութիւնը, որի մտոյցները տրուել են այլ գաղութներում:

բ.— Չրդայի մէջ դրօշակի համակիրների դէմ եղել է ստուար մեծամասնութիւն որ հաստատուած է Մէյճըր Ֆելիքս Սթրայքմընի քուէարկութեամբ:

գ.— Յանձնախումբը պարզել է օրում համար իր արած որոշումներն ու կարգադրութիւնները Առաջնորդ Գուրեան Սրբաբանին, որ հրաւիրուած է եղել Չրդայի Եկեղեցու Հողարարձութեան կողմից եւ Հայկական Օրում հանդիսին նախագահելու հրաւեր ստացել Գործադիր Յանձնախումբից, որպիսի որոշումները Առաջնորդը զոհացուցիչ է դատել, եւ ընդունել:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը, նկատի առնելով վերոյիշեալ փաստերը,

Ո Ր Ո Շ Ե Ց .—

ա.— Ճանաչել Գործադիր Յանձնախումբի որոշումները հիմնաւորուած, խոհեմ եւ իրաւացի,

բ.— Ամերիկայի Թեմի Առաջնորդ Գեր. Տ. Ղեւոնդ Արքե-

եպիսկոպոսի Չիքազոյի Արուեստահանդիսում եւ ընդհանրապէս բունած դիրքը համարել միանգամայն օգտակար եւ օրինական,

գ.— Խնդրել Աղդիս ՎեչԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԷՆ յատուկ շքանշաններով հրատարակել ըստ ամենայնի լուսարանելով դրօշակի հետ կապուած խնդիրները ամենուրեք հայ ժողովրդի յուզուած մտքերը հանդարտեցնելու, ճայր առած մտար հասկացողութիւնները փարատելու եւ հանդիստ ու խաղաղ իրենց աշխատանքին նուիրուելով հիւրընկալող պետութիւններէ եւ ազգերի սէրն ու համակրութիւնը վայելելու նպատակով:

բ.— Նոյն աղբիւրներից պարզուած է նաեւ.—

ա.— Որ Աղդային Երեսփոխանական Ժողովը Սեպտեմբերի 2 ի առաջին օրինական նիստն է դումարել Նիւ Եօքքի 27-րդ փողոցի եկեղեցու ներքնասրահում Տ. Յովսէփ Եպիսկոպոս Կարապետանի նախադահուութեամբ, յանձնարարութեամբ Տ. Թեմակալ Առաջնորդի:

բ.— Նոյն նիստում ընտրուել է Գննիչ Յանձնախումբ նորընտիր երեսփոխանների ընտրական տեղեկագիրները քննելու եւ իր կարկաչանքները ներկայացնելու Երեսփոխանական Ժողովին ի սնօրէնութիւն: Այլ եւ անախորժ դէպքեր կանխելու եւ երեսփոխանների խօսելու ազատութիւնը պահպանելու նպատակով ժողովի երկու ընդդիմադիր կողմերի հաւանութեամբ եւ նախադահուած ամաճանութեամբ որոշել է յաջորդ նիստը դումարել 27-րդ փողոցի եկեղեցու մէջ եւ դռնփակ, եւ նիստը փակուել է:

գ.— Երեսփոխանական Ժողովի փոքրամասնութիւնը 27-րդ փողոցի եկեղեցու հոգաբարձութեան հետ միացած, հակառակ նախորդ նիստի որոշման եկեղեցու հոգաբարձութեան կարգադրութեամբ մերժել է բուն տաճարը տրամադրել Երեսփոխանական Ժողովին ու նախորդ նիստի սրահը թոյլատրել, որ զբաւուի խուներամ բազմութեամբ:

դ.— Երեսփոխանական Ժողովի փոքրամասնութեան բունած հակառակ դիրքի հետեւանքով մեծամասնութեան առաջարկով եւ Առաջնորդի համաձայնութեամբ որոշուած է Երեսփոխանական Ժողովի նիստերը դումարել Մարթինիկ Հոտելում, որի մասին Առաջնորդը հրահանգում է ժողովին նախադահուած Տ. Յովսէփ Եպիսկոպոսին հազորդել փոքրամասնութեան:

ե.— Տ. Յովսէփ Եպիսկոպոսը իր իսկ խոստովանութեամբ չի համարձակուած փոքրամասնութեան դումարած նիստում յայտարարել թէ ժողովը պիտի դումարուի Հոտել Մարթինիկում, երե-

կոյեան ժամը վեցին եւ հարկադրուած է լինում բանալ ժողովն ու նախադահուած:

զ.— 27-րդ փողոցի եկեղեցու ներքնասրահում հաւարուած փոքրամասնութեան կողմից ընդդիմադիր երեսփոխաններից մէկը հեռախօսով վճռականապէս յայտարարում է Մարթինիկ Հոտելում դումարուած մեծամասնութեան ժողովի նախադահին թէ իրենք որոշել են ժողովը 27-րդ փողոցի եկեղեցու սրահում միայն դումարել եւ դռնբաց: Որից յետոյ Առաջնորդի հաւանութեամբ բացուած է Երեսփոխանական Ժողովի երկրորդ նիստը 57 երեսփոխանների ներկայութեամբ եւ տրուած են մի շարք որոշումներ:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը նկատի առնելով վերոյիշեալ փաստերը, ՈՐՈՇԵՑ.—

1.— Նիւ Եօքքի 27-րդ փողոցի եկեղեցու ներքնասրահում փոքրամասնութեան դումարած ժողովը ճանաչել ապօրինի:

2.— Նոյն ժողովում Առաջնորդի նկատմամբ փոքրամասնութեան հանած պաշտօնանկութեան որոշումը համարել անհիմն, հակասահմանադրական եւ ապօրինի (Սահման. 21-րդ Յօդ. կէտեր 2 եւ Ժ):

3.— Այլ եւ նկատի առնելով, որ Առաջնորդի որոշումը ժողովատեղու եւ ժամանակի փոփոխութեան մասին տարաբախտաբար պաշտօնապէս չի յայտարարուել փոքրամասնութեան, ինչպէս նաեւ առանց առնելու Տ. Յովսէփ Եպիսկոպոսից նախադահուելու իրաւունքը, Երեսփոխանական Ժողովի նոր նախադահ է նշանակուել, առաջարկել Թեմակալ Առաջնորդ Տ. Ղեւոնդ Արքեպիսկոպոսին պատահ ժամանակում նոր ժողով հրատարակել իր նախադահութեամբ մի անգամ եւս առթելով երեսփոխաններին ի մի ժողովել եւ մի յայտարարի գալ:

(ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի տարւոյս Հոկտեմբերի 25-ի ԿԵ. նիստի արձանագրութեան սոյն պատճէնի իսկութիւնը եւ հարազատութիւնը հաստատուած է ստորագրութեամբ եւ կնքով, 24 Նոյեմբեր 1933 Թ., Ս. Էջմիածին:

Անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի

ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Քարտուզար՝ Կ. ԳՈԶԱՐԵԱՆ

ԿՆԻՔ

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ

ԽՈՐՀՈՒՐԴ

Ս. ԷՋՄԻԱՇԻՆ

Ինչպէս կը տեսնուի, Վեհ. Հայրապետը իր խմատունն եւ խոհական որոշմամբ, Առաջնորդը իր պաշտօնին վրայ պահելով հանդերձ, փափաքած էր որ մինչև զերագրգուտած կիրքերու խաղաղեցումը ընկալեալ կարգերը անփոփոխ պահուին, «պատեհ ժամանակում նոր ժողով հրաւիրուի Առաջնորդի նախագահութեան ներքեւ. մի անգամ եւս առթելով երեսփոխաններին ի մի ժողովել եւ մի յայտարարի դալ:»:

Դաշնակցութիւնը չուզեց հպատակիլ Գերագոյն Հոգեւոր Իշխանութեան կողմէ հրահանգուած այս բանաւոր եւ խաղաղասիրական որոշման:

Ընդհակառակը, ան՝ անգոսնեց Հայրապետական Իշխանութիւն, Օրէնք եւ Սահմանադրութիւն, եւ շարունակելով իր ապերասան եւ պառակտիչ դործունէութիւնը, կազմեց առանձին Վարչութիւն եւ Հոգաբարձութիւններ, իրեն հետ ունենալով մէկ քանի ըմբոստ եկեղեցականներ:

Այս բոլորը սակայն ոչինչ չահեցուց Դաշնակցութեան, հակառակ Առաջնորդը եւ Առաջնորդարանը նիւթապէս եւ բարոյապէս պոյքօթի ենթարկելու իր բազմաթիւ կոչերուն համակրական յարաճուն հոսանք մը կազմուած էր Առաջնորդի շուրջ, եւ Դաշնակցութիւնն ալ, ընդհակառակը, հետզհետէ կտրուած ժողովուրդէն, ինք իր մէջ մեկուսանալու դատապարտուած էր:

Եւ այս վհատ դրութեան մէջ էր որ Դաշնակցութիւնը նոր ահարեկչութեամբ կ'երեւի խորհեցաւ իր կորսնցուցած դիրքը վերագրաւել, եւ տուաւ որոշումը

ՈՃԻՐՆԵՐՈՒ ՈՃՐԻՆ:

Դեկտ. 24-ի առաւօտուն Դուրեան Սրբազան, Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ, եկեղեցական պաշտամանց պահուն մտադործի դանակով կը մորթոտուէր հայանուն դահիճներու ձեռքով:



17
ԳԻՆ 10 ՍԷՆՐ

ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԵԻՈՆԴԻ ԴՈՒՐԵԱՆ ՅԱՆՁՆԱԵՈՒՄԻ

Archbishop Leon Tourian Committee

156 FIFTH AVENUE

NEW YORK